

**Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՒՅՑ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ  
ՔՍԱՆԱՄԵԱՅ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ**

Շաբաթ 11 եւ Կիրակի 12 Փետրուար 2006-ը յիշարժան օրեր էին Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ ծխական մեր համայնքի կեանքին մէջ:

Շաբաթ, 11 Փետրուարի երեկոյեան, տեղի ունեցաւ նախատօնակի արարողութիւն, ապա նաեւ Ս. Սարգիս ծխական համայնքի հիմնադրութեան քսանամեակին նուիրուած ճաշկերոյթ մը, իսկ Կիրակի առաւօտուն եկեղեցւոյ մէջ ուխտի պատարագի մատուցմամբ եւ մատաղօրհնէքի հոգեպարար արարողութեամբ տօնական մթնոլորտը մնաց տիրապետող:

Պատարագիչն էր Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան: Խորանին կը սպասարկէին Գերպ. Միւռն Ճ. Կրօ Ազնիկեան եւ եկեղեցւոյ Հովիւ՝ Արժ. Խորէն քիւյ. Պապօշեան:

Նախքան պատարագիչ Սրբազան Հօր հոգեւոր պատգամ-քարոզը, քշոցակիր դպիրներու առաջնորդութեամբ, եկեղեցւոյ անուանակոչութեան եւ հիմնադրութեան բարեբաստիկ առիթներուն նուիրուած՝ Մեծի Տանն Կիլիկիոյ արժանընտիր գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսին կողմէ Ս. Սարգիս եկեղեցւոյ հաւատացեալ համայնքին յղուած Օրհնութեան Գիրը հանդիսաւորապէս Ս. Խորան բարձրացուելով, Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ կարդացուեցաւ: Վեհափառ հայրապետը կը շնորհաւորէր եկեղեցւոյ անուանա-կոչութիւնն ու ծխական համայնքի քսանամեայ կազմակերպ կեանքը, որուն յաջող պսակումը հանդիսացած էր ներկայ եկեղեցւոյ կառուցումը, եւ զոր ինք անձամբ օծած էր անցնող Հոկտեմբերին, երբ հովուապետական այցելութեամբ կը գտնուէր Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմը: Հուսկ ապա Վեհափառ հայրապետը կը թելադրէր սպառնազինուիլ մեր հայրերու լոյս հաւատքով եւ ըլլալ գիտակից մեր հայ քրիստոնէայ կոչումին, նախանձախնդիր տնտեսներ՝ մեզի կտակուած ոգեղէն արժէքներուն եւ ժառանգութեանց, համախմբուիլ քարեղէն կառոյցէն վեր՝ կենդանի՝ *եկեղեցւոյ* շուրջ, այսինքն՝ մեր հայրերու հաւատքին, հայոց լեզուին, մշակոյթին, սրբազան անուններուն եւ բարոյական այն արժէքներուն, որոնք ազգի մը յաւերժութիւնը կ'երաշխաւորեն:

Պատարագիչ Սրբազան Հայրը այնուհետեւ իր հոգեւոր պատգամին մէջ նախ շնորհաւորեց Փասատինայի ծխական համայնքի հիմնադրութեան 20-ամեակը, գնահատանքի եւ օրհնութեան խօսքերով իր գնահատանքը յայտնեց անցեալի ու ներկայի բոլոր նուիրեալ հիմնադիրներուն, որոնք իրենց անձնագոհ ծառայութիւններով կերտած են Փասատինայի հայ Առաքելական ծխական համայնքին ներկան: Առաջնորդ Սրբազանը անոնց շարքին յիշեց ծուխի առաջին հոգեւոր Հովիւ, այժմ լուսահոգի՝ Արժ. Տ. Սարգիս Ա. Քիւյ. Անդրեասեանը, ինչպէս նաեւ հոգաբարձական, երեսփոխանական, տիկնանց թէ յարակից մարմիններուն տարած անգնահատելի ծառայութիւնները, որոնք յանգած են ներկայ նրբաշէն եկեղեցւոյ կառուցման, ինչ որ տարիներու մեր բոլորին փայփայած երազն էր՝ սեփական եկեղեցի ունենալը: Նորակերտ այս եկեղեցին իր

հաւատացեալ հօտով կենդանացաւ, նորափետուր զարդարուեցաւ երբ տակաւին քանի մը ամիսներ առաջ Կիլիկիոյ ազգընտիր գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, սրբալոյս Միւռնով օծեց խորանն ու սիւները այս նորակառոյց եկեղեցիին, նորած աղօթքի այս տան տալով Պէյրութի Սիս թաղի Սսեցիներու Ս. Սարգիս համանուն եկեղեցւոյ անունը: Զեղ մը երկնային նոր շունչ առած քարեղէն եկեղեցին կենդանացաւ եւ աստուածային Ս. Զոզոյ զօրութեան պատմունճանը սփռուեցաւ, պարուրելով ու վեհացնելով աղօթասաց ուխտաւոր զաւակները հայ ազգին: «Միւռնաօծ եւ սրբաքանդակ քարեղէն այս եկեղեցին կենդանի, պայծառ ու շէն պահողը դուք պիտի ըլլաք, սիրելի ժողովուրդ, ձեր մշտական ներկայութեամբ շունչ ու կեանք տաք, որպէսզի ան հրաշագարդէ, հրաշափոխէ ձեր եւ ձեր զաւակներուն կեանքերը, հանապազ օրինէ ձեզ ու օրինուին բոլոր անոնք, որոնք հաւատարիմ կը մնան հայու առաքելական հաւատքին ու մեր նախնեաց աւանդութիւններուն: Սիրելի բարերարներ, նուիրատուներ եւ համայն հաւատացեալ ժողովուրդ ձեր աչքի բիբին պէս պահպանեցէք Աստուծոյ այս սուրբ տունը, որովհետեւ անիկա մեր բոլորին հոգեւոր մայրն է: Անոր սուրբ աւագանին մէջ պիտի մկրտուին եւ հայու Միւռնով կնքուին ու հայանան ձեր սիրասուն զաւակները: Զոս ձեր երիտասարդները պսակի նարօտ պիտի կապեն, ապաշխարողներ՝ մեղաց թողութիւն պիտի ստանան, հիւանդներ եւ հոգեպէս տառապողներ, սգաւորներ եւ յուսաբեկներ՝ բժշկութիւն, խաղաղութիւն եւ մխիթարութիւն պիտի ստանան, իսկ յաւիտենականութեան ճանապարհորդներ իրենց վերջին հրաժեշտը պիտի տան՝ անմահութեան յոյսը աչքերուն», յորդորեց Առաջնորդ Սրբազանը, որ շարունակեց. «Այսօր սիրելիք, նաեւ անուանակոչութեան տօնն է այս եկեղեցւոյ: Զամանուն այս եկեղեցւոյ անունը կրող Սուրբ Սարգիս զօրավարը, իր որդին՝ Մարտիրոս եւ հաւատակից ու զինակից տասնչորս նահատակներ, Քրիստոսի սիրոյն յանձն առին արեամբ մկրտուիլ՝ բարձրադաղակ վկայելու թէ Քրիստոս խոստացուած Փրկիչն է եւ Անոր քարոզած Աւետարանին ճշմարտութիւնները յաւիտենականութեան տանող միակ ճանապարհը»:

Ապա Առաջնորդ Սրբազանը ամփոփ գիծերու մէջ ներկայացնելէ ետք Ս. Սարգիս Զօրավարի կեանքի կարեւոր հանգրուաններն ու սխրագործութիւնները, որպէս քաջայաղթ զօրավար՝ վեր առաւ անոր նկարագրի կարեւոր գիծերը, շեշտելով Քրիստոսի սիրով վառուած Սուրբին անձանձրոյթ աղօթողի, հաւատքի տարածիչի, նեղեալներն ու գերիները ազատագրողի, հաւատացեալներու զանազան բարի փափաքները, սպասումները-աղաչանքները իրականացնողի, հրաշքներ կատարողի, դէւեր հալածող եւ բագիններ կործանողի, Քրիստոսի մօտ զօրաւոր բարեխօսի խնդրակատար արագահաս Ս. Սարգիսի բարեմասնութիւնները: Ապա իր խօսքը եզրակացնելով, Առաջնորդ Սրբազանը աղօթեց ու մաղթեց որ որ Քրիստոսի երկնային զօրքերու գլուխը անցած Ս. Սարգիս Զօրավար աշխարհին պարգեւէ Աստուծոյ խաղաղութիւնը, եւ համանուն իր անունը կրող այս եկեղեցին ու անոր սրբազան կամարներուն ներքեւ աղօթող հաւատացեալ մեր ժողովուրդին աղօթքներն ու խնդրանքները, ուխտերն ու բարի ցանկութիւնները իրականացնէ եւ մեր բոլորի անունով հանապազ բարեխօսէ Աստուածորդի Քրիստոսի մօտ:

Թող Տեր Աստուած օրհնէ Ս. Սարգիս եկեղեցւոյ հաւատաւոր մեր ժողովուրդը, օրհնէ եկեղեցւոյս Հոգեւոր Հովիւը, հոգաբարձութիւնը, երեսփոխաններն ու եկեղեցւոյ ծառայող սարկաւազներն ու ուրարակիր դպիրները, դպրաց դասն ու եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը, եկեղեցւոյս բարերար Տեր եւ Տիկ. Սարգիս Կիտցիներն ու իր ընտանիքը, եկեղեցւոյս անցեալի ու ներկայի բոլոր ազնիւ նուիրատուներն ու համայն հաւատացեալները իր մարդախնամ ողորմութեամբ միշտ պահելով, պաշտպանելով չարէն ու ամէն տեսակի փորձութիւններէն ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյս եւ ի հոգեւոր շինութիւն Փասատիսայի համայնքին:

Յաւարտ սուրբ եւ անմահ պատարագին, Առաջնորդ Սրբազան Հայրը շրջապատուած եկեղեցականաց եւ սարկաւազաց դասերով Հոգեհանգստեան պաշտօն կատարեց ապա սուրբ խորանի բեմին վրայ դրուած մատաղը օրհնելէ ետք սարկաւազներ բաժնեցին ուխտաւոր ժողովուրդին:

### ՆԱԽԱՏՕՆԱԿ ԵՒ 20-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Կիրակնօրեայ այս հանդիսաւոր արարողութեանց նախօրեակին, Շաբաթ, 11 Փետրուարի երեկոյեան, եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ նախատօնակի արարողութիւն, ապա նաեւ ծխական այս համայնքի կազմութեան 20րդ տարեդարձին առթիւ ճաշկերոյթ:

Նախատօնակի արարողութիւնը կատարուեցաւ հանդիսապետութեամբ Թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր, իր կողքին ունենալով Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիկիմեանն ու շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Խորէն Զինյ. Պապօշեանը:

Կիրակամտից հոգեթով արարողութեան աւարտին հոգեւոր հայրերն ու սարկաւազները երգեցին Ս. Սարգիսի նուիրուած յատուկ շարականը՝ «Ամենասուրբ Երրորդութեան», զոր յօրինած է Ս. Ներսէս Շնորհալի հայրապետ, որմէ ետք Սրբազան Հայրը երգեց բարեխօսութեան մաղթանք երգը՝ «Քրիստոս Աստուած Մեր»ը, խնդրելով Ս. Սարգիսի, անոր որդւոյն եւ 14 հաւատարիմ զինուորներուն բարեխօսութիւնը հաւատացեալ ժողովուրդին համար:

Արարողութեան աւարտին, Առաջնորդ Սրբազանը ներկայ հաւատացեալներուն խօսեցաւ օրուան խորհուրդին մասին եւ ներկաները հրաւիրեց իրենց կեանքի օրինակով նմանելու Ս. Սարգիս Զօրավարին, եւ ապրելու հաւատքի ու առ Աստուած վստահութեան կեանք մը: Ապա կոչ ուղղեց հոգեպէս պատրաստուելու վաղուան տօնախմբութեան ու Ս. Պատարագին, հաղորդուելու մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի մարմնով ու արիւնով, ապրելու Անոր ներկայութեամբ՝ ինչպէս ապրեցան Ս. Սարգիսն ու իրեն հետեւողները:

Աւելի ուշ, Փասատիսայի Հայ Կեդրոնին մէջ տեղի ունեցաւ ծխական համայնքի 20ամեակի ճաշկերոյթ խրախճանը:

Յայտագրին առաջին պաշտօնական բաժինը սկսաւ Առաջնորդ Սրբազան Հօր եւ հոգեւորականաց բացման աղօթքով ու սեղանի օրհնութեամբ: Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ՝ Տիար Սարգիս Թաթիկեան եւ Տիկնանց Միութեան ատենապետուհի՝ Տիկին

Թերեզ Քեմանճեան արտասանեցին բարի գալստեան եւ շնորհակալական խօսքեր: Ներկաներուն ներկայացուեցաւ Փասատիւնայի եկեղեցական կեանքի 20-ամեայ գործունեութիւնը եւ Ս. Սարգիս եկեղեցւոյ կառուցումը ներկայացնող տեսողական խտասալիկ (DVD) մը, ուր անցեալի յուշն ու ներկայի ուրախութիւնը խտացնող յուզիչ պատկերներու ամփոփում մըն էր: Ապա կատարուեցաւ մոմավառութիւն, ինչպէս նաեւ գնահատագիրներ տրուեցան եկեղեցւոյ խոնարի սպասարկուներուն, ձեռամբ՝ Առաջնորդ Սրբազան Զօր, որ այս առիթով՝ տուաւ իր պատգամը:

Առաջնորդ Սրբազան Զայրը ներկաները ողջունելէ եւ իր ուրախութիւնը յայտնելէ ետք կազմակերպուած այս ձեռնարկին համար, ըսաւ, որ «այսօր արդէն բոլորիս երազը իրականացած է եւ Փասատիւնայի մեր գաղութը օժտուած է իր սեփական եկեղեցիով»: Սրբազան Զայրը յիշեց, թէ 4 ամիսներ առաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Զայրապետին ձեռքով օժուած էր եկեղեցին, կոչուելով Ս. Սարգիս եկեղեցի: Յիշեց եկեղեցւոյ բարերարները՝ Տէր եւ Տիկին Սարգիս Կիտցիւնեան, որոնց ներդրումով այսօր իրականութիւն կը դառնայ եկեղեցի ունենալու երազը: Սակայն Սրբազանը կոչ ուղղեց, որ չի բաւեր միայն եկեղեցի ունենալ, այլ պետք է եկեղեցին միշտ լեցուն եւ կենսունակ պահել, աղօթող համայնքի վերածուելով: Ապա Սրբազանը յայտնեց, որ մօտիկ ապագային Ս. Սարգիս եկեղեցին կ'ունենայ իր հայկական ոճով գմբեթն ու զանգակատունը: Սրբազանը գնահատեց օրուան հովանաւորները եւ շնորհաւորեց Սարգիս եւ Մարտիրոս անունները կրողները:

Յայտագրին երկրորդ բաժինով խանդավառ մթնոլորտ մը ստեղծուեցաւ՝ հայերէն եւ օտար երգերու մատուցմամբ: Ուշ գիշերին ներկաները վերադարձան իրենց տուները՝ ուրախ եւ գոհունակ սրտով:

## ST. SARKIS CHURCH NAME DAY AND 20<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE ESTABLISHMENT OF THE PARISH COMMUNITY CELEBRATIONS

Saturday, February 11 and Sunday, February 12 were memorable dates for the St. Sarkis Church and its community in Pasadena. On the evening of Saturday, February 11, on the occasion of the eve of the feast of St. Sarkis, an evening service took place followed by a banquet to mark the 20<sup>th</sup> anniversary of the establishment of a parish community in Pasadena. On Sunday, February 12, Holy Mass was conducted and Blessing of the Offerings to celebrate the feast of St. Sarkis.

On Sunday, February 12, His Eminence Archbishop Moushegh Mardirossian conducted Holy Mass and the Blessing of the Offerings. He was joined at the altar by Very Rev. Fr. Muron Aznikian and Rev. Khoren Babouchian, pastor at St. Sarkis. Prior to his sermon, Archbishop M. Mardirossian read the Pontifical blessing of His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia. In His letter, the Catholicos congratulated the name day of the church and also its 20<sup>th</sup> anniversary, which resulted in the building of

the present-day location, which He consecrated in October during His Pontifical visit to the Prelacy. He encouraged the faithful saying that we must continue with the faith of our forefathers, be zealous stewards, and unite around our church, language, culture, and traditions to ensure the endurance of our people.

In his sermon, the Prelate congratulated the 20<sup>th</sup> anniversary of the parish and with praise and blessings expressed his gratitude to the past and present devotees whose selfless service led the church to where it is today. The Prelate specifically remembered the first pastor of St. Sarkis, Rev. Sarkis Andreassian, and also all the Board of Trustees, delegates, and Ladies Auxiliary members whose dedicated service resulted in the realization of the greatest dream of all, to have our own church. This newly built church, flourished by its faithful parishioners, was enriched just a few months ago when His Holiness Aram I anointed its altar and pillars with Holy Myron and bestowed upon it the name St. Sarkis, in honor of St. Sarkis Church in the Sis quarter of Beirut, Lebanon. Addressing the crowd, the Prelate said “you are the ones who will keep the church alive and bright and give it the breath and life it needs and in return you and your children will be blessed and blessed will also be all those who remain faithful to the Armenian Apostolic faith and our centuries old traditions”. He continued to say, “protect this holy house of worship for this is where your children will be baptized and wed, where the repented will receive forgiveness, where the sick and spiritually weak, the grieving and hopeless will be healed and receive peace and consolation”. Since this was also the name day of St. Sarkis the commander, the Prelate spoke of St. Sarkis, his son Mardiros and the fourteen martyrs who shed their blood for Christ as a testament that Christ was the savior and the only path to eternal life.

Subsequently, the Prelate briefly outlined the key aspects of St. Sarkis’s life as a brave commander, then spoke of his character stressing that he was a person who, filled with Christ’s life, spread the Christian faith, freed captives, granted believers their wishes, performed miracles, and persecuted heathens. In his conclusion, the Prelate prayed for the spirit of St. Sarkis to grant peace to mankind and his namesake church and parishioners, grant them the realization of their prayers and vows, and be an intercessor to Christ on behalf of the faithful. He continued by saying may the Lord bless St. Sarkis Church, its parishioners, pastor, Board of Trustees, delegates, deacons, choir, Ladies Auxiliary, sponsors Mr. and Mrs. Sarkis Kitsinian and family, and all the servants of past and present, keeping them safe from harm for the brightening of this church. Following Holy Mass, the Prelate conducted Requiem services after which he conducted the Blessing of the Offering services, which the deacons then distributed to the parishioners.

## EVE OF THE FEAST OF ST. SARKIS AND 20<sup>TH</sup> ANNIVERSARY BANQUET

On Saturday, February 11, the eve of the Feast of St. Sarkis service took place as well as a banquet in honor of the 20<sup>th</sup> anniversary of the establishment

of the parish. The eve of the feast service was conducted under the auspices of Archbishop Mardirossian, Prelate, joined at the altar by Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Khoren Babouchian, pastor of the church. At the conclusion of the service, the clergy and deacons sang a hymn, composed by St. Nerses, dedicated to St. Sarkis after which the Prelate sang a hymn, beseeching the intercession of St. Sarkis, his son and their fourteen loyal soldiers for the faithful parishioners.

Following the service, the Prelate spoke of the day's message and called for all those present to live a God fearing life in the example of St. Sarkis. Thus, he entreated the faithful to spiritually ready themselves for the following day's festivities and Holy Mass, and by receiving the sacrament of the Holy Communion to live with the presence of Christ in their souls as St. Sarkis and his followers lived.

Later in the evening, the 20<sup>th</sup> anniversary banquet took place at the Pasadena Armenian Center. The official program began with the Prelate's welcoming remarks and blessing of the tables followed by welcoming remarks by St. Sarkis church Board of Trustees Chairman, Mr. Sarkis Tatuigian, and Ladies Auxiliary Chair Mrs. Terez Kemanjian. A DVD was then presented to the guests chronicling the past 20 years of the parish community, including the construction of the present-day church. Next was the lighting of the candles, after which certificates were handed out by the Prelate who, on this occasion, conferred his message. The Prelate greeted the guests and after expressing his joy for this gathering said: "Today our dreams have already come true as the Pasadena community has been endowed with its own church". He brought to attention Mr. and Mrs. Sarkis and Suzan Kitsinian, whose bequest made the dream of having this church a reality. On the other hand, the Prelate pointed out that just having a church is not enough and that it is crucial to keep the church alive and full. He then announced that following the architectural traditions of the Armenian Churches, the church will have a dome and bell tower in the near future. He concluded by praising the sponsors and organizers of the banquet and congratulated all those with the names Sarkis and Mardiros.

The second part of the program proceeded in a festive atmosphere, after which the guests headed home filled with glee and content.